ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ

INTERNATIONAL REVIEW OF ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ALL ARMENIAN FOUNDATION FINANCING ARMENOLOGICAL STUDIES

2024 N 3 (36)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՔԱՌԱՄՍՅԱ ՀԱՆԴԵՍ, ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻՑ
TRI-ANNUAL JOURNAL PUBLISHED SINCE NOVEMBER 2013

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ 2024 Թ. N 3 (36)

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ · HISTORY

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ · PHILOLOGY

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ · ART

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ · BOOK REVIEWS

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ · PUBLICATION

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY

ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող

vterghevondian@gmail.com

0009-0004-7212-4683

DOI: 10.54503/1829-4073-2024.3.5-21

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏԻ (XIII Դ.) «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԵԱՆՑ» ԵՐԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամփոփում

Արքունի ատենադպիր Վահրամ վարդապետի, կամ Վահրամ Րաբունի «Պատմութիւն Ռուբենեանց»-ը ոչ ծավալուն, չափածո մի երկ է՝ ամբողջությամբ նվիրված Կիլիկիայի հայկական պետության պատմությանը իր սկզբնավորումից (1080 թ.) մինչև XIII դարի 80-ական թվականները: Այն ստեղծվել է որպես շարունակություն Ներսես Շնորհալու «Վիպասանութեան»՝ հետևելով նրա ոճին ու հանգին: Թագավորի պատվերով ստեղծված այս գործը ձեռագիր մատյաններում միավորվել է այլ հեղինակների (Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի և ուրիշներ) գործերի հետ: Գրեթե նույն սկզբունքով էլ կազմվել են տպագիր օրինակները: XIX դարում այն ունեցել է մի քանի հրատարակություն, սկսած 1804-ից (Մադրաս) մինչև 1869-ը (Փա-

* *Հոդվածը ներկայացվել է 20.09.24, գրախոսվել է 21.10.24, ընդունվել է տպագրության 15.12.2024:*

րիզ): Մինչ այժմ եղած բոլոր հրատարակությունները բաժանվում են երեք տարբերակի. ա) «Մադրաս-1804», բ) «Փարիզ-1859» և գ) «Մադրաս-1810-Կալկաթա-1832-Փարիզ-1869», որոնք տպագրվել են հիմնվելով միմյանցից ակնհայտորեն տարբերվող ձեռագիր ընդօրինակությունների վրա: «Պատմութիւն Ռուբենեանց»-ի վերոհիշյալ երեք տարբերակի համար որպես հիմք ծառայած բոլոր ձեռագրերը կամ ոչնչացել-անհետացել են, կամ նրանց գտնվելու վայրն անհայտ է: Ուստի տպագիր օրինակները, քանի դեռ համապատասխան ձեռագրերը չեն հայտնաբերվել, ունեն բնագրի նշանակություն և պարտադիր կերպով պետք է հաշվի առնվեն տվյալ երկի քննական բնագրի կազմման պարագայում: Տպագիրների միջև կատարված համեմատությունը վկայում է հօգուտ «Մադրաս-1810-Կալկաթա-1832-Փարիզ-1869» տարբերակի, որն ամենաամբողջականն է: Ասվածը հատկապես վերաբերում է Էդուարդ Դյուլորիեի «Փարիզ-1869»-ի տպագրությանը, որը նաև առավել խնամված տեքստ ունի (շարադրված առնվազն 3–4 ձեռագրի համեմատությամբ), օժտված է գիտական կառուցվածքով ու ֆրանսերեն լիարժեք թարգմանությամբ:

Բանալի բառեր՝ *Վահրամ վարդապետ (Վահրամ Րաբուն (Րաբունի)), Պատմութիւն Ռուբենեանց, Կարապետ Շահնազարեանց, Էդուարդ Դյուլորիե, Մադրաս, Կալկաթա, Փարիզ:*

Ներածություն

Կիլիկյան Հայաստանի վերջին հզոր թագավոր Լևոն Գ (II)-ի օրոք[1] ապրած Վահրամ վարդապետ Եդեսացին, կամ Վահրամ Րաբունը (Րաբունին) իր ժամանակի բացառիկ պետական այրերից է, որ Հայոց արքունիքում ունենալով շատ բարձր ու պատասխանատու դիրք, որպես Լևոն Գ (II)-ի ատենադպիրը, միաժամանակ թողել է հարուստ մատենագրական ժառանգություն: Այն ընդգրկում է հիմնականում աստվածաբանական ու մեկնողական երկեր:

[1] Այս թագավորի ծաղկուն քսանամյա շրջանին և նրա անարժան (ըստ հեղինակի) ժառանգներին հետաքրքիր բնորոշում է տալիս Կարապետ վարդ. Շահնազարյանցը. «Թագաւորութիւն Լեւոնի երրորդի եղև արդարև թագաւորութիւն վերանորոգութեան ուսմանց և կրթութեան առ Հայս. և եթէ երկինք հաշտ ակամբ հայեցեալ էին առ Հայաստան ժողովուրդն. պարգևէին հարկաւ եւ իմաստասէր թագաւորին այնմիկ ժառանգս հաղորդս իւրով առաքինութեանց. սակայն թուի թէ նախնիք մեր չեղեն արժանի այսմ շնորհացս. սմին իրի և մահուամբն Լեւոնի երրորդի շիջաւ եւ լոյս իմաստութեան առ Հայս Կիլիկիոյ. եւ անկաւ վերստին ազգն ի խորխորատ տգիտութեան յոր գնայ ցարդ ընդ խարխափ» (**Վահրամ** 1859, 10–11):

Դրանց մեջ հատկապես արժեքավոր են մեկնողական բնույթի գործերը, ինչպես Արիստոտելի «Կատեգորիաների» և «Պերիարմէնիաս»-ի, Պորփյուրի «Ներածության», Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան», Կեղծ-Արիստոտելի «Աշխարհի մասին», Գրիգոր Նյուսացու «Մարդու կառուցվածքի մասին», Դիոնիսիոս Արեոպագացու «Երկնային քահանայապետության մասին» երկերի մեկնությունները: Վահրամ վարդապետի մեզ հասած գործերի մեջ է նաև Լևոն թագավորին օծելու տոնակատարության ժամանակ ասած ճառը: Եթե սրան գումարենք նաև մի ամբողջ շարք կրոնական-աստվածաբանական աշխատությունները,[2] ապա կարելի է ասել, որ նրա երկերի մատենագիտությունը մոտենում է երկու տասնյակի:

Այդ բոլոր աշխատությունների մեջ իր միակ պատմական բնույթի «Պատմութիւն Ռուբենեանց» երկով Վահրամ Րաբունը մեկն է Կիլիկիա-Եփրատացիքում ապրած ու այնտեղ գործած սակավաթիվ պատմիչներից: Նրա երկը թե՛ ընդգրկած ժամանակաշրջանով և թե՛ հեղինակների կյանքի տարիներով ընդհանրություններ ունի Սմբատ Սպարապետի ու նրա «Տարեգրքի» հետ: Րաբունի երկը բացառիկ է հենց թեկուզ նրանով, որ ունի չափածո հորինվածք, հղացվել է որպես Ներսես Շնորհալու «Վիպասանութեան» շարունակություն և շարադրվել է Հայոց արքայի պատվերով: Իրականում այս երկու իրարահաջորդ գործերը, մի շարք այլ երկերի հետ, կարող են բնորոշվել իբրև հայ միջնադարյան պատմագրության մի առանձին ժանր՝ «չափածո պատմագրություն» անվամբ:

XIII դարի 80-ականներին (հավանաբար մինչև կեսերը) ստեղծված այս երկը հետագա ընդօրինակություններում որպես փոքրածավալ ստեղծագործություն, գրեթե միշտ, մաս է կազմել տարբեր ժողովածուների՝ միավորվելով այլ երկերի (օրինակ՝ Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ»-ի) հետ: Իսկ այն հանգամանքը, որ երկը գրված է (նույնպես հետևելով Շնորհալուն) ութվանկանի տողերով և միանման հանգով, նկատվել է որպես հարմար միջոց՝ երիտասարդ սերնդին նախնյաց պատմությունը առավել մատչելի և ընդունված ձևով փոխանցելու համար, ուստի հաճախ ընդգրկվել է կրթական նպատակներով կազմված զանազան ձեռնարկների մեջ: Սակայն, չնայած այս երկի հանդեպ դեռևս XIX դարի սկզբից եղած մեծ հետաքրքրությանը և ոչ քիչ թվով հրատարակություններին՝ մինչ օրս չի կազմվել «Պատմութիւն Ռուբենեանցի» քննական բնագիրը: Բնականաբար, նման գործ ձեռնարկելով, նախ անդրա-

[2] Տե՛ս **Գրիգորյան** 1969, 19–23:

դարձ կատարեցինք առկա բոլոր տպագիր օրինակներին: Հետազոտությունը ցույց տվեց, որ «Պատմութիւն Ռուբենեանցի» պարագայում դրանք շատ կարևոր նշանակություն ունեն քննական բնագրի համար:

Հնդկաստանի ձեռագրերի կորուստը

Մեր պրպտումների արդյունքում (Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան՝ 7 ձեռագիր, Վենետիկի (Սուրբ Ղազարի) Մխիթարյան միաբանության մատենադարան՝ 10 ձեռագիր, Վիեննայի Մխիթարյանների մատենադարան՝ 3 ձեռագիր, Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի մատենադարան՝ 2 ձեռագիր) հետևելով ձեռագրացուցակներին, այսօրվա դրությամբ, հայտնաբերել ենք ընդհանուր առմամբ 22 ընդօրինակություն: Սակայն կարելի է ենթադրել, որ նախկինում (մինչև XVIII դ. վերջ և XIX դ. առաջին կես) դրանց թիվն ավելի մեծ էր: Բանն այն է, որ ժամանակին Վահրամի երկի օրինակներ եղել են նաև Հնդկաստանում (Մադրաս, Կալկաթա), ինչպես նաև Կ. Պոլսում, սակայն դրանք այսօր չկան: Համենայն դեպս, Հնդկաստանի օրինակները 1860-ական թվականների առաջին կեսին անառողջ և ձեռագրերի համար խիստ վնասակար պայմաններում պահվելու հետևանքով ոչնչացել են:

Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Սիմոն Սիմոնեանը իր «Հնդկահայ կարեւոր վաւերագիր մը» հոդվածում, որը լույս է տեսել Անթիլիասում (Լիբանան) Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Հասկ» հայագիտական տարեգրքի 1983–1984 թթ. համարում:[3] «Կարեւոր վաւերագիր»-ը վերաբերում է մի գրության, որ մաս է կազմում երկու քահանաների միջև նամակագրության: Կալկաթայում ապրած Յովհաննէս աւագ քահանայ Խաչկեանը (1804–1897) գրում է Կ.Պոլսում ապրող Յովհաննէս աւագ քահանայ Մկրեանին (1831–1909): Նամակից պարզ է դառնում, որ Խաչկեան քահանան 1844 թ. Կալկաթայում հաստատվելուց ի վեր, սկսում է ամեն կողմից ձեռք բերել ու հավաքել հայկական հին ձեռագրեր՝ դրանց թիվը հասցնելով 75-ի: Այնուհետև լուրջ հակասություններ են առաջանում Խաչկեան քահանայի և Նոր Ջուղայի ու հնդկահայոց թեմի առաջնորդ Թադեոս եպիսկոպոսի միջև: Վերջինս սպառնում է իրեն չենթարկվելու դեպքում զրկել Խաչկեանին քահանայագործելու իրավունքից, բանադրել նրան և այլն: Մտածելով, որ ձեռագրերը կարող են ցիրուցան լինել՝ Խաչկեանը դրանք լցնում է մի արկղի մեջ և ի պահ տալիս իր եղբոր գործատան պահեստին՝ Կալկաթայի մոտակա Չիչրա քաղաքում: Այ-

[3] Մեր երախտագիտությունն ենք հայտնում Միհրան Մինասեանին՝ այս հոդվածի մասին մեզ հուշելու համար (Վ.Տ.-Ղ.):

նուհետև մեծ ջանքեր է գործադրում իր իրավունքները պաշտպանելու համար՝ նամակներով դիմելով Ամենայն Հայոց Մատթեոս կաթողիկոսին և Սրբազան Սինոդին: Ի վերջո, Խաչկեանը, երեք տարվա (1861–1864) պայքարից հետո, հասնում է նրան, որ Մայր Աթոռից ի պաշտպանություն իրեն՝ գրություն է ստանում, որը վերականգնում է նրա իրավունքներն ու պաշտպանում Նոր Ջուղայի առաջնորդի հետապնդումներից: Վերջապես անդորր գտնելով, նա որոշում է դուրս բերել պահեստից արկղը և բացել այն: Նրա առջև պարզվում է մի անսպասելի տեսարան՝ ձեռագրերի երեք քառորդը խոնավության և այլ պատճառներով ամբողջությամբ քայքայված էին, իսկ մնացորդների վրա հավաքված էին «զբիւրաւոր որդունս»: Արկղի բացումը և մեծ կորուստը հայտնաբերվում է հավանաբար 1863-ի վերջի և 1864 թ. կեսի միջակայքում: Խաչկեանը կրկնակի ափսոսանք է ապրում, քանի որ այս դեպքերից անմիջապես առաջ մերժած է լինում հնդկահայոց կտակի հարցերով Կալկաթա եկած Միքայել Նալբանդյանի առաջարկը: Վերջինս պատրաստ էր գնել ողջ հավաքածուն ու տեղափոխել այն Եվրոպա: Ինքը՝ Խաչկեանը իր ունեցած հավաքածուի ցուցակը չէր կազմել, բայց քանի որ հավաքորդը ձեռք էր բերել դեռևս XVIII դարում Հնդկաստանում հավաքված հայկական ձեռագրերի մեծ հավաքածուներ (իսկ սրանք ցուցակագրված էին), հոդվածագիրը դիմում է 1795 թ. «Ազդարար»-ում տպված երկու ցանկերի, որոնցում ընդգրկվածները մեծ հավանականությամբ անցել էին Խաչկեանին: Սրանց մեջ մեծ թիվ են կազմում հայ մատենագիրներ, պատմիչներ: Ի շարս այլ հեղինակների, քայքայված ու ոչնչացած հավաքածուի մեջ հիշատակվում է նաև «Վահրամայ որդւոյ Տիգրանայ, եւ որք զկնի բանից Սրբոյն Ներսէսի՝ ի նոյն ոճս առեալ սակս տանն Ռուբինեանց»:[4]

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, որպես եկեղեցական թեմ, Հնդկաստանը ենթակա էր Նոր Ջուղայի առաջնորդին, ենթադրելի էր, որ ինչ-որ ձեռագրեր հետագայում կարող էին հանգրվանել այնտեղ, սակայն եղած ձեռագրացուցակում մեր պրպտումները արդյունք չտվեցին: Համենայն դեպս, Լևոն Մինասյանի կազմած ցուցակում «Ոտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց»-ը կամ Վահրամ վարդապետի որևէ երկ բացակայում էր:[5]

Վահրամի երկի այս օրինակների ոչնչացումով շատ հավանական է անհետացել են հենց այն ձեռագրերը, որոնց հիման վրա իրականացվել են Մադրասի (1804) և Մադրաս-Կալկաթայի (1810–1832) հրատարակությունները:

[4] Տե՛ս **Սիմոնեան** 1983–1984, 440:

[5] Տե՛ս Ցուցակ Ձեռագրաց, Նոր-Ջուղա, 1972:

Անհայտ է մնում նաև Կ. Պոլսի Միջագյուղ (Օրթագյուղ, Օրթաքյոյ) թաղամասի եկեղեցում եղած օրինակի ճակատագիրը, որից օգտվել է Կարապետ Շահնազարյանցը՝ իր 1859 թ. հրատարակությունը կազմելիս:

Հրատարակությունների համեմատությունն ու խմբավորումը

Վահրամ Րաբունու այս երկը ունեցել է 7 (1804, 1810, 1831, 1832, 1859, 1864, 1869) հրատարակություն, բոլորն էլ XIX դարում, շուրջ 65 տարվա ընթացքում: Դրանցից չորսում (1804, 1810, 1832, 1859) հայերեն բնագիրն է, մեկը (1869) հայերեն բնագիրը՝ ֆրանսերեն թարգմանությամբ, իսկ երկուսը (1831, 1864) անգլերեն և ֆրանսերեն թարգմանություններ են՝ առանց հայերեն բնագրի:

Տվյալ երկի հրատարակության ճակատագիրը յուրօրինակ է, քանի որ բոլոր հետագա հրատարակությունները հիմնված են առաջին չորսի (Մադրաս 1804,[6] Մադրաս 1810,[7] Կալկաթա 1832[8] և Փարիզ 1859[9]) վրա, իսկ այն ձեռագրերը, որոնց հիման վրա դրանք տպվել են, կամ ոչնչացել են, կամ էլ դրանց ճակատագիրն անհայտ է: Այսպիսով, «Պատմութիւն Ռուբենեանցի» հրատարակությունները ստանում են բնագրի նշանակություն և դրանց ուսումնասիրությունը ձեռք է բերում առավել մեծ կարևորություն, քան կարող էին ունենալ որևէ այլ բնագրի հրատարակությունները:

Վահրամ Րաբունի երկը հրատարակելու առաջին փորձը կատարվել է Մադրասում, 1804 թվականին: Երկն ընդգրկված է մի ժողովածուի մեջ, որը հնդկահայոց մեջ տարածված ոճով խորագրված է «Տետրակ որ կոչի պատճառ»: Ժողովածուն կազմել է Մարիամ Տէր Յակոբեանցը: Այստեղ ընդգրկված են ուսումնական նպատակներով հավաքված տարբեր տեքստեր: «Տետրակ»-ը հրատարակվել է Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցու տպարանում: Հենց այն նույն Շմաւոնեանի, որը դրանից 10 տարի առաջ լույս էր ընծայել հայկական առաջին պարբերական «Ազդարար»-ը: Րաբունի երկը սկսվում է 69-րդ էջից և շարունակվում մինչև 137-րդ էջը (ընդհանուր՝ 1372 տող), կամ գրքի վերջը: Այստեղ Վահրամը ներկայացվում է որպես «Մեծ վարդապետն հայոց Վահրամ, Րաբուն մականուանեալ, ատենադպիր մեծի Արքային հայոց Լևոնի, որոյ խնդրանօք արար զփոքրիկ տետրակս վիպասա-

---

[6] **Վահրամ** 1804:

[7] **Վահրամ** 1810:

[8] **Վահրամ** 1832:

[9] **Վահրամ** 1859:

նութեան տաղաչափական արհեստիւ, սկսեալ ի թագաւորութեանց Ռուբենեաց մինչ ցապառումն նորա իսպառ, համառօտ ոճիւ»: Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցին, որ հավանաբար իր նախաձեռնությամբ Մարիամ Տէր Յակոբեանցի կազմած ժողովածուի վերջում ավելացրել է Րաբունի երկը, գրում է, որ ցավոք ձեռագրի առաջին 2–3 էջերը պակասում էին, որոնք այդպես էլ չի կարողացել լրացնել: Ասում է, որ երկար փնտրելուց հետո պակասող էջերը չի գտել, ուստի որոշել է այդպես էլ տպել՝ ընդգրկելով այդ ժողովածուի մեջ, քանի որ վախենում էր, որ եղածն էլ կկորչի:

Այսպիսով, հենց առաջին հրատարակության՝ «Տետրակ որ կոչի պատճառ»-ում հրատարակվածը հիմնված է մեկ, եզակի, պակասավոր ձեռագրի վրա, որը մեզ չի հասել:

Վահրամի պատմական երկի հրատարակության երկրորդ փորձը արվում է նույն Մադրասում, բայց այլ տպարանում, այլ հրատարակչի կողմից:[10] Գրքի ընդհանուր խորագիրն է «Ողբ Եդեսեայ քաղաքի»:[11] Բացի Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» և Վահրամ Րաբունի «Պատմութիւն Ռուբենեանց»-ի, ընդգրկված է նաև Ներսես Լամբրոնացու «Ներբողեան առ Սուրբն Ներսէս Շնորհալի»: Ընտրությունը պատահական չէ արված: Այս երեք երկերը միմյանց է կապում Սուրբ Ներսես Կլայեցու անձն ու գործը: «Ողբ Եդեսիոյ» հռչակավոր երկի կողքին Շնորհալուն նվիրված Լամբրոնացու Ներբողյանն է և Վահրամ վարդապետի երկը, որը գրվել է նույն Շնորհալու «Վիպասանութեան» հետևողությամբ և իբրև այդ երկի շարունակություն: Վերջապես, երեք գործն էլ չափածո ստեղծագործություններ են:

Հրատարակությունն իրականացրել է Սարգիս Ծատուր Աղաւալեանցը իր տպարանում: Որևէ խոսք չկա նախորդ (1804) հրատարակության, կամ այն ձեռագրի (ձեռագրերի) մասին, որից (որոնցից) օգտվել է կազմողը: Մի բան հստակ է, մադրասյան երկու հրատարակությունները արված են երկու բոլորովին տարբեր ընդօրինակություններից: Ընդ որում, 1810-ինն ավելի ամբողջական է: Բավական է նշել, որ այն 146 տողով գերազանցում է նախորդին: Այն ընդգրկում է ժողովածուի 97–166 էջերը (ընդհանուր՝ 1518 տող): Ընդ որում, այս հրատարակությունն ուշագրավ է նաև նրանով, որ կարծես համեմատական բնագիր կազմելու առաջին փորձն է: Դրա օգտին է խոսում հետևյալ արտահայտությունը, որ տպված է հենց տիտղոսաթերթի վրա՝ «Զգուշաւոր քննութեամբ ուղղագրեալ բաղդատութեամբ ձեռագիր օրինա-

[10] **Վահրամ** 1810:

[11] **Վահրամ** 1832, Տիտղոսաթերթ:

կաց»:[12] Ճիշտ է, այս արտահայտությունը վերաբերում է բոլոր երկերին, ուստի չենք կարող անվերապահորեն պնդել, որ հենց Վահրամի երկի համար կազմողները դիմել են մեկից ավելի օրինակների, թեև տարբեր ձեռագրերի բաղդատությունը կազմողների համար, ըստ երևույթին, այնքան կարևորություն է ունեցել, որ այս դարձվածը զետեղել են տիտղոսաթերթում:

Վահրամ վարդապետի երկը հաջորդ անգամ հրատարակվում է Կալկաթայում, նշանավոր Մարդասիրական Ճեմարանում՝ 1832 թվականին: Իրականում, սա նոր հրատարակություն չէ, այլ մադրասյան երկրորդ հրատարակության վերատպությունն է՝ ընդգրկելով նույն հեղինակներին (Ներսես Շնորհալի, Վահրամ վարդապետ, Ներսես Լամբրոնացի), նույն հերթականությամբ: Միակ տարբերությունն այն է, որ վերջում ավելացված են նաև անգլերեն և հայերեն բանաստեղծություններ, անկասկած՝ կրթական նպատակներով: Վահրամ վարդապետի երկի էջերը և տողերի քանակը ամբողջությամբ համապատասխանում է 1810-ի օրինակին՝ 97–166 էջեր (1518 տող):

Հատորը ներկայացվում է որպես Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանի հրատարակություն՝ առանց նշելու կազմողի կամ կազմողների անունները: Կարճ նախաբանում, որ կոչվում է «Առ ընթերցողս», մեզ այդպես էլ անհայտ մնացած կազմողը, անդրադառնալով մադրասյան հրատարակությանը (1810 թ.), նշում է, որ վերջինս սակավ տպաքանակ ունենալով՝ արագ սպառվել է, և իրենք հիմա այն հրատարակում են «հետևելով Մադրասեան օրինակին ի պէտս համբակացն Ճեմարանին մերոյ: Յուսալի է մեզ զի տպագրութիւն այսր գործոյ արծածեսցէ ի սիրտս Հայ գրասիրաց զսէր բանաստեղծութեան, որոյ նպատակն է սէր առ Աստուած և սէր առ մարդիկ»:[13]

Եթե 1810–1832-ի հրատարակության վերաբերյալ համեմատական բնագիր լինելու հանգամանքը ենթադրելի է, ապա 1859-ի փարիզյան հրատարակությունը որոշապես կազմված է երկու ձեռագիր ընդօրինակությունների հիման վրա (մի բան, որի մասին նշում է կազմողը նախաբանում), ուստի այն, առանց որևէ կասկածի, կարելի է համարել համեմատական բնագիր:

«Շար Հայ պատմագրաց»-ը օգտաշատ մի մատենաշար է, որը նախաձեռնել ու հրատարակել է Սուրբ Էջմիածնի միաբան Կարապետ վարդապետ Շահնազարեանցը Փարիզում: Հենց այս շարքի (Ղևոնդ, Ստեփանոս Ասողիկ, Ստեփանոս Օրբելեան) հերթական հատորն է, որ ընդգրկում է երկու կիլիկե-

---

[12] **Վահրամ** 1832, Տիտղոսաթերթ:

[13] **Վահրամ** 1832, 0:

ցի հեղինակների՝ Սմբատին ու Վահրամին:[14] «Ոտանաւոր Պատմութիւնը» հաջորդում է Սմբատի «Տարեգրքին» և զբաղեցնում է 181–242 էջերը: Վահրամ Րաբունի երկի այս նոր հրատարակության մանրամասների վերաբերյալ կազմողը փոխանցում է սակավ տեղեկություններ, որոնք որոշ գաղափար տալիս են, բայց նաև թողնում են հարցականներ. «Տպագրութիւն գրոյս արարաւ համեմատութեամբ երկուց օրինակաց, յորոց զմին օրինակեալ էի վաղ ժամանակօք իմով ձեռամբ. զերկրորդն ետ մեզ ազգասիրաբար Թանգարանն վերծանութեան Միջագիւղին Կոստանդնուպօլսի, որում գոհութիւն շատ: Ջսակաւ տարբերութիւնսն դրոշմեցաք յաւարտ գրոյս ի գիտութիւն քննասիրաց»:[15] Զարմանալի է, բայց Շահնազարյանցը չի հիշատակում «Պատմութեան» նախորդ երեք հնդկաստանյան հրատարակություններից և ոչ մեկը: Տեքստերի քննությունը ևս ցույց է տալիս, որ շահնազարյանական հրատարակությունը նույնական չէ ոչ «Մադրաս-1804»-ի և ոչ էլ «Մադրաս 1810-Կալկաթա-1832»-ի հետ:

Փորձենք հասկանալ, թե որ երկու ձեռագրերից է օգտվել կազմողը: «Յորոց զմին օրինակեալ էի վաղ ժամանակօք իմով ձեռամբ» արտահայտությունը ոչ մի հստակ հետք չի նշում: Շահնազարյանցի մեզ հայտնի կենսագրությունը[16] հուշում է, որ այս արտահայտությունը կարող է վերաբերել 1830-ական թվականներին, երբ նա ուսանում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և, ըստ վկայությունների, ընդօրինակություններ կատարում տեղի մատենադարա-

---

[14] Ֆրանսերենով գրված կարճ ծանուցման մեջ այս երկու հեղինակներին միավորելը կազմողը բացատրում է հետևյալ կերպ. «Ես մեկ հատորի մեջ միավորել եմ Սմբատ Սպարապետին և Վահրամ վարդապետին, որպես ժամանակակից պատմիչներ, որոնք անդրադառնում են նույն թեմային, այն է՝ Ռուբինյան-Լուսինյան տոհմի թագավորությանը» (**Վահրամ** 1859, 182):

[15] **Վահրամ** 1859, 183–184:

[16] Ծնունդով համադանցի, մելիքական տոհմից ծագող Կարապետ Շահնազարեանցը սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում՝ ուսումնառությունը շարունակելով 5–6 տարի: Այդ ժամանակ արդեն մեծ հետաքրքրություն է հանդես բերել միջնադարյան հայ մատենագրության հանդեպ: Մեծ հավանականությամբ հենց այդ ժամանակ էլ նա կատարել է ընդօրինակություններ Սուրբ Էջմիածնում պահվող ձեռագրերից: Այնուհետև Կարապետ Շահնազարյանցը տարբեր պաշտոններ է վարել Տաթևի վանքում, Թիֆլիսում, նշանակվել է նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանի տեսուչ: 1850 թ. հետո նա հեռանում է Ռուսական կայսրությունից, և սկսվում է նրա կյանքի մի նոր շրջան: Նախ մեկնում է Կ.Պոլիս: Վերջապես 1855-ից հաստատվում է Փարիզում, որտեղ ձեռնարկում է իր մատենաշարը: Ապա 1863-ին հեռանում Փարիզից Մանչեստր, ապա բժշկվում Փարիզում, այստեղից անցնում Եգիպտոս և վերադառնալով Կ.Պոլիս, այստեղ կնքում իր մահկանացուն 1865-ին և այստեղ էլ թաղվում (Տե՛ս **Կոստանեանց** 1910, 6–38):

նում: Ուստի չի բացառվում, որ Էջմիածնից Երևանի Մաշտոցյան Մատենադարանին անցած ձեռագրերից որևէ մեկի քննությունը պարզի, որ դա հենց այդ օրինակն է: Ինչ վերաբերում է Կոստանդնուպոլսի Միջագյուղի թանգարանի (այն է՝ գրադարան-մատենադարանի) օրինակին, ապա դրա փնտրտուքը առայժմ արդյունք չի տվել: Կ.Պոլսի տարբեր եկեղեցիներում եղած հայկական ձեռագրերը ժամանակի ընթացքում կենտրոնացվել են Կ. Պոլսի Պատրիարքարանի գրադարանում, որտեղ այսօրվա դրությամբ Վահրամի այս երկի ընդօրինակություններ, ըստ մեր տեղեկությունների, չկան: Կարելի է ենթադրել, որ Շահնազարյանցը որպես հիմք ընդունել է ժամանակին իր ընդօրինակած ձեռագիրը, իսկ Միջագյուղի ձեռագիրը օգտագործել հավելումների կամ ճշգրտումների համար:

Այսպիսով, 1804–1859 թթ. ընթացքում առկա են Վահրամ Րաբունի «Ոտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց» երկի չորս տարբեր հրատարակություններ (Մադրաս, 1804, Մադրաս 1810, Կալկաթա, 1832 և Փարիզ 1859), որոնցից երկրորդն ու երրորդը նույնական են, ուստի կարելի է ընկալել որպես միասնական՝ «Մադրաս-1810-Կալկաթա-1832» տեքստ: Միաժամանակ այդ երեք տարբերակները միմյանց հետ ուղիղ կապ չունեն: Եվ ամենակարևորը՝ հիմնված են տարբեր ընդօրինակությունների վրա:

Ֆրանսիացի նշանավոր արևելագետ-հայագետ Էդուարդ Դյուլորիեն 1860-ական թվականներին ձեռնարկեց Խաչակրաց պատմության նվիրված ժողովածուի «Հայկական վավերագրեր» ստվարածավալ և արժեքավոր հատորի կազմումը: Այստեղ հնարավորին չափ ամբողջական ներկայացված են այդ դարաշրջանի հայկական աղբյուրները, հատկապես պատմիչները: Ի շարս այլ հեղինակների, նա անդրադառնում է նաև Վահրամ վարդապետին, որին կոչում է Վահրամ Եդեսացի:[17] Կարելի է ասել, որ Դյուլորիեն առաջինն է, որ փորձում է համեմատել երեք տեքստերը և որոշակի ընտրություն կատարում դրանց միջև: Այլ կերպ ասած՝ բնագրագիտական քննություն է կատարում հանգելով եզրակացության: Ահա թե ինչ է գրում Դյուլորիեն. «Վահրամի պոեմը գրված է միանման հանգով ավարտվող ութվանկանի տողերով, ինչպես Ներսես Շնորհալու «Ողբ»-ը՝ գրված Զանգիի կողմից Եդեսիայի գրավման առիթով, կամ Գրիգոր Տղայի գործը՝ նվիրված Սալահ ադ-Դինի կողմից Երուսաղեմի գրավմանը: Այս երկն ունեցել է երեք հրատարակություն՝ առա-

[17] Թեև նշում է, որ հաճախ հիշվում է որպես Վահրամ Րաբուն (ասորերեն՝ Րաբբան, ուսուցիչ, գիտուն բառից):

ջինը՝ Մադրասում, 1810 թվականին,[18] բավական պակասավոր և սխալաշատ, երկրորդը՝ Կալկաթայում 1832-ին, և երրորդը՝ վերջերս Փարիզում հրատարակված Կարապետ վարդապետ Շահնազարյանի կողմից, բայց այն պակաս ամբողջական է,[19] քան Կալկաթայինը, որին ես մտածեցի, որ պետք է հետևեմ և որը ես վերարտադրեցի՝ ավելացնելով որոշ օգտակար տարընթերցումներ, որոնք վերցրի փարիզյան հրատարակությունից»:[20]

Վաստակաշատ գիտնականը Մադրասի 1804-ի հրատարակությունը շփոթել է Մադրասի 1810-ի հրատարակության հետ, քանի որ «բավական պակասավոր և սխալաշատ» է հենց 1804-ի հրատարակությունը, մինչդեռ 1810-ինը հենց այն ամբողջական տարբերակն է, որը նույնությամբ վերատպվել է Կալկաթայում, և որին հետևում է Դյուլորիեն: Հետաքրքիր է, որ Դյուլորիեի հրատարակությունը երկու տողով (1520) գերազանցում է «Մադրաս-1810-Կալկաթա-1832»-ին (1518): Այդ մասին առաջաբանում նա ոչինչ չի ասում: Համեմատությունը ցույց տվեց, որ այդ երկու տողը (1425–1426-րդ տողեր) նա վերցրել է Շահնազարյանցի (էջ 238) հրատարակությունից (Զարին զոհիցըն խառնեալ է/ Ընդ արին նոցին զոր հեղեալ է): Մնացած տողերն ամբողջությամբ համապատասխանում են «Մադրաս-1810-Կալկաթա-1832»-ի հրատարակությանը: Միաժամանակ, բացի «որոշ օգտակար տարընթերցումներ» ավելացնելուց «Փարիզ-1859»-ի գրքից, Դյուլորիեն նաև.

1. տողերը համարակալել է տասնյակներով (10, 20 և այլն մինչև 1520),[21]

2. բոլոր հատուկ անունները դարձրել է մեծատառ,

3. վերացրել է ութվանկանի տողերը երկուսի բաժանող և սահուն ընթերցմանը խանգարող բութերը,

4. բոլոր այն դեպքերում որտեղ համարել է, որ կա տրամաբանական կամ քերականական սխալ ուղղել է՝ մեծ մասամբ տեղին:

---

[18] Անկասկած շփոթում է 1804-ի հրատարակության հետ (Վ.Տ.-Ղ.):

[19] «Փարիզ-1859»-ի հրատարակության համեմատությունը «Մադրաս-1810-Կալկաթա-1832-Փարիզ-1869»-ի տարբերակի հետ ցույց տվեց, որ առաջինը ուղիղ 100 տողով պակաս է: Ընդ որում, դրանք երբեմն առանձին մեկ-երկու պակասող տողեր են, իսկ օրինակ 850–950 տողերի միջև կան պակասող ավելի մեծ հատվածներ (օրինակ՝ հաջորդաբար 16 տող, հաջորդաբար 24 տող և այլն): Դրանք հիմնականում վերաբերում են Զաբել թագուհուն և Հեթում թագավորի սկզբնական շրջանին (Վ.Տ.-Ղ.):

[20] **Vahram** 1869, 491.

[21] 1810–1832-ում համարակալված են երկտողերը, հասնելով մինչև 750-ի (3 տող վրիպելով) և ապա վերջում ունենալով ևս 21 տող: Այսինքն, 750x2=1500–3=1497+21=1518:

Դյուլորիեն տեղյակ է և հիշատակում է նաև մի հրատարակության մասին, որը լույս է տեսել Լոնդոնում 1831-ին՝ անգլերեն արձակ թարգմանությամբ:[22] Սակայն այդ տեքստը նա զանց է առնում՝ այն իրավացիորեն համարելով «Խիստ համառոտ» և «արհեստական» մի տարբերակ, որը պակասավոր գաղափար է տալիս բնագրի վերաբերյալ:[23] Հետաքրքիր է, որ նույն այդ 1831-ի անգլերեն թարգմանությունը բոլորովին վերջերս վերատպվել է, այն տարբերությամբ, որ նույն գրքում զետեղվել է նաև «Փարիզ-1859»-ի հայերեն տեքստը:[24]

Կարելի է ասել, որ գիտական հետաքրքրություն չի ներկայացնում նաև ֆրանսերեն հրատարակությունը,[25] որը լույս է տեսել անգլերենից ավելի քան 30 տարի անց (1864), բայց նախքան Դյուլորիեի հրատարակությունը: Այն պարզապես բառ առ բառ համապատասխանում է 1831-ի անգլերեն հրատարակությանը և, հավանաբար, հենց այդ տեքստից էլ թարգմանված է՝ չնչին տարբերություններով:[26]

---

[22] **Vahram** 1831. Սա մի յուրահատուկ գիրք է՝ կազմված չինարենից ու հայերենից արված թարգմանություններից, որոնց միջև ուղիղ կապ չկա: Այն միավորում է երեք գործ՝ երկուսը Չինաստանին վերաբերող (մեկը վերաբերում է 1807–1810 թթ. ծովահեններին, մյուսը՝ Չինաստանի բուդդայական կրոնի սկզբունքներին և հոգևորականների ներքին կանոններին) և Վահրամի «Ոտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց»-ը, որը ձևակերպված է որպես "Vahram's Chronicle of the Armenian Kingdom of Cilicia during the time of the Crusades": Երեք բաժինն էլ օժտված են առաջաբանով: Ընդ որում, գրքի վաճառման ցանցի մեջ (Լոնդոն, Փարիզ, Լայպցիգ, Կալկաթա) հիշատակվում է նաև Կալկաթայի մի ընկերություն, որը հուշում է հեղինակի՝ հնդկահայության հետ ծանոթության կամ առնչության մասին: Որպես թարգմանիչ, ծանոթագրությունների և պատկերազարդումների հեղինակ, հիշատակվում է Չարլզ Ֆրիդ (Ֆրիդրի՞խ) Նեումանը: Գիրքը հրատարակել է Արևելյան թարգմանության մի ինչ-որ հիմնադրամ: Ներածությունից պարզ է դառնում, որ թարգմանիչը երկար ժամանակ ապրել է Արևելքի երկրներում և մեծապես հետաքրքրված է տարբեր կրոններով, դավանանքներով ու աղանդներով: Կիլիկիային վերաբերող տեքստը թարգմանիչը ձոնել է պրոֆեսոր Ուիլքենին (Վիլկենին), որը հեղինակն է «Խաչակրաց պատմություն» գրքի և գրադարանավարն է Պրուսիայի թագավորի: Վահրամի երկին նվիրված առաջաբանում Նեումանը նշում է, որ թարգմանությունը կատարված է Մադրասի 1810-ի հրատարակությունից: Այնուհետև տեքստն է, որը Վահրամի երկի անգլերեն արձակ թարգմանությունն է, կամ՝ վերապատմումը:

[23] **Vahram** 1869, 491.

[24] **Vahram** 2020.

[25] **Vahram** 1864.

[26] Դա է հաստատում հենց տիտղոսաթերթում զետեղված գրությունը խմբագրության կողմից՝ «Այն (տարեգրությունը) նախ տպագրվել է հայերեն Մադրասում և ապա Փարիզում՝ 1860-ին: Մեզ ծանոթ է այս երկի անգլերեն թարգմանությունը շնորհիվ պ-ն Նեումանի

Եզրակացություն

Վահրամ վարդապետի «Պատմութիւն Ռուբենեանց» երկի հրատարակությունների քննության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացության.

1. Հայերեն բնագրի մինչ այժմ եղած բոլոր հրատարակությունները բաժանվում են երեք տարբերակի ա) «Մադրաս-1804» բ) «Փարիզ-1859» և գ) «Մադրաս-1810-Կալկաթա-1832-Փարիզ-1869», որոնք տպագրվել են հիմնվելով միմյանցից ակնհայտորեն տարբերվող ձեռագիր ընդօրինակությունների վրա:

2. «Պատմութիւն Ռուբենեանց»-ի վերոհիշյալ երեք տարբերակի համար որպես հիմք ծառայած բոլոր ձեռագրերը կամ ոչնչացել-անհետացել են, կամ նրանց գտնվելու վայրն անհայտ է: Ուստի տպագիր օրինակները, քանի դեռ համապատասխան ձեռագրերը չեն հայտնաբերվել, ունեն բնագրի նշանակություն և պարտադիր կերպով պետք է հաշվի առնվեն տվյալ երկի քննական բնագրի կազմման պարագայում:

3. Տպագիրների միջև կատարված համեմատությունը վկայում է հօգուտ «Մադրաս-1810-Կալկաթա-1832-Փարիզ-1869» տարբերակի, որն ամենաամբողջականն է: Ասվածը հատկապես վերաբերում է Էդուարդ Դյուլորիեի «Փարիզ-1869»-ի տպագրությանը, որը նաև առավել խնամված տեքստ ունի (շարադրված առնվազն 3-4 ձեռագրի համեմատությամբ), օժտված է գիտական ապարատով ու ֆրանսերեն լիարժեք թարգմանությամբ: Որքան էլ զարմանալի է, մինչ այժմ հետազոտողները շատ ավելի հաճախ դիմել են ոչ թե վերոհիշյալ, այլ «Փարիզ-1859»-ի (Կ. Շահնազարյանցի) հրատարակությանը:

4. Եթե «Պատմութիւն Ռուբենեանց»-ի ձեռագրատներում առկա երկու տասնյակից ավելի օրինակների մեջ չհայտնաբերվի առավել ամբողջական ու ընտիր մի տեքստ, հնարավոր է, որ «Փարիզ-1869»-ը որպես հիմք ծառայի Վահրամ վարդապետի միակ պատմական երկի քննական բնագիրը կազմելու համար:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գրիգորյան Գ. 1969, Վահրամ Րաբունու փիլիսոփայությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 227 էջ: *(**Grigoryan G.** 1969, Vahram Rabunu pilisopayut'yowny', Erewan, HSSH GA*

(Լոնդոն, 1831), բայց այն երբևէ չի հրատարակվել ֆրանսերենով: Պոլսահայ Սահակ Պետրոսյանը հանձն առավ կատարել այդ աշխատանքը, որն առաջին հերթին առաջարկվում է «Ռեվյու»-ի ընթերցողներին (խմբագրության կողմից)» (**Vahram** 1864, page de titre).

hrat, 227 êj). ***Grigoryan G.*** *1969, The philosophy of Vahram Rabuni, Yerevan, ASSR AS Press, p. 227 (in Armenian).*

Կոստանեանց Կ. 1910, Կարապետ վարդապետ Շահնազարեանց (կենսագրական ակնարկ), «Լումայ գրական հանդէս», Թիֆլիս, հ. 5–6, էջ 3–38: *(**Kostanyants K.** 1910, Karapet vardapet Shahnazaryants, "Luma grakan handes", Tiflis, 5–6, 3–38 êj).* ***Kostanyants K.*** *1910, Karapet vardapet Shahnazaryants, "Literary Review Luma", Tiflis, 5–6, p. 3–38 (in Armenian).*

Սիմոնեան Ս. 1983–1984, Հնդկահայ կարեւոր վաւերագիր մը, «Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Հասկ» հայագիտական տարեգիրք», Անթիլիաս, Լիբանան, էջ 421–450: *(**Simonyan S.** 1983–1984, Hndkahay karevor vaveragir my', "Kilikio katoghikosutean "Hask" hayagitakan taregirq", Antilias, Libanan, 421–450 êjer)* ***Simonyan S.*** *1983–1984, An important document of Armenians of India, "Armenological yearbook "Hask" of the Catholicosate of Cilicia", Antelias, Lebanon, p. 421–450. (in Armenian).*

Վահրամ 1804, Տետրակ որ կոչի պատճառ, Մադրաս, ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւոնեան Շիրազեցւոյ, կազմողն է՝ Մարիամ Յակոբ Յովհաննէս Տէր Յակոբեանց, 69–137 էջեր, 138 էջ: *(**Vahram** 1804, Tetrak vor kochi patjar, Madras, I tparani Ter Harutyun Shmavonean Shirazecvo, kazmoghn e Mariam Hakob Ter Hakobeants, 69–137 êjer, 138 êj).* ***Vahram*** *1804, A notebook called reason, Madras, publishing house of Ter Harutyun Shmavonean of Shiraz, edited by Mariam Hakob Ter Hakobeants, p. 69–137, p. 138 (in Armenian).*

Վահրամ 1810, Ողբ Եդեսեայ քաղաքի, շարադրեալ՝ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ՝ Հայոց Կաթուղիկոսի Կլաեցւոյ: Վիպասանութիւն Հայոց չափեալ ոտիւք, Տեառն Վահրամայ մեծի Վարդապետի: Ներբողեան առ սուրբն Ներսէս Շնորհալին, ասացեալ Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, ոտանաւոր հեգմամբ յանգեալ: ի Մադրաս, 97–166 էջ: *(**Vahram** 1810, Voghb Yedeseay kaghaki, sharadreal srbuyn Nersesi Shnorhalvo Klayetsvo. Vipasanutyun hayots chapeal votivk Tearn Vahrama metsi Vartapeti. Nerboghean ar surbn Nerses Shnorhalin, asatseal Tearn Nersesi Lambronacvo, votanavor hegmamb hangeal, Madras, 97–166 êj). Vahram 1810, Lamentation for the city of Edessa composed by Saint Nerses Shnorhali of Kla, Catholicos of Armenians. History of Armenians in verse by the Great Vahram Vartabed. Panegyric in verse for Saint Nerses Shnorhali composed by Nerses of Lambron. Madras, p. 97–166 (in Armenian).*

Վահրամ 1832, Վիպասանութիւն Հայոց չափեալ ոտիւք՝ Տեառն Վահրամայ մեծի Վարդապետի: Ի Կալկաթա, ի տպարանի Մարդասիրական Ճեմարանի, 97–166 էջ: *(**Vahram** 1832, Vipasanutyown Hayoc chapeal votivk Tearn Vahrama metsi Vartapeti. I Kalkata, I tparani Mardasirakan Jemarani, 97–166 êj).* ***Vahram*** *1832, History of Armenia in verse by Great Vahram Vartapet, Calcutta, Printing House of "Mardasirakan Jemaran", p. 97–166. (in Armenian).*

Վահրամ 1859, Սմբատ և Վահրամ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի: Փարիզ, Ի գործատան Կ.Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, 181–248 էջեր: *(**Vahram** 1859, Smbat yev Vahram, I luys y'ntsajeac handerc tsanotuteambk Karapet Vardapet Shahnazareants – miaban srbo Ejmiatsni. Paris, I*

gortsatan K.V. Shahnazareants, 181–248 êj). ***Vahram*** *1859, Smbat and Vahram, published with comments by Karapet Vardapet Shahnazareants – member of the congregation of Saint Ejmiatsin. Paris, Printing House of K.V.Shahnazareants, p. 181–248 (in Armenian).*

Ցուցակ Ձեռագրաց 1972, Ցուցակ Ձեռագրաց Նոր-Ջուղայի ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, Հատոր Բ., կազմեց Լ.Գ. Մինասեան, խմբագրութեամբ՝ Օ.Ս. Եգանեանի, Վիեննա, Մխիթարեան տպարան, Katalog der Armenischen Handschriften in der Bibliothek des klosters in Neu-Djoulfa, Band II, Bearbeitet von L.G.Minassian, Redigiert von O.S.Eganian, Wien, 1972, Mechitharisten-Buchdrucherei, printed in Austria. *(**Cucak Dzeragrac** 1972, Cucak Dzeragrac Nor Jughayi s. Amenaprkchean vanac tangarani, Hator B, kazmec L.G.Minasean, khmbagruteamb O.S. Eganeani, Vienna, Mkhitarean tparan),* ***Manuscript Catalogue*** *1972, Manuscript Catalogue of the library of Surb Amenaprkich monastery in Nor Jugha, II vol., composed by L.G. Minasean, edited by O.S. Yeganean, Vienna, Mkhitarean Printing House. (in Armenian).*

Vahram 1831, Translations from the Chinese and Armenian, by Charles Fried. Neuman, London, in-8, p. VII–XIX, p. 21–97.

Vahram 1864, Chronique du Royaume Arménien de la Cilicie, à l'époque des Croisades, composée par Vahram Rapoun et traduite sur l'originale arménien par Sahag Bedrosian (de Constantinople), Paris, Benjamin Duprat, 1864.

Vahram 1869, Recueil des Historiens des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-lettres, Documents Arméniens, tome premier, Paris, Imprimerie Impériale, MDCCCLXIX, p. 491–536.

Vahram 2020, History of the Rubenian dynasty, Vahram Rabuni, Armenian text in verse with English prose translation, Published by Sophene 2020, edited by Beyon Miloyan and Kimberley McFarlane, printed in Poland, Wroclaw.

ИЗДАНИЯ «ИСТОРИИ РУБЕНИДОВ» АРХИМАНДРИТА ВАГРАМА (XIII в.)

ВААН ТЕР-ГЕВОНДЯН

Резюме

«История Рубенидов» архимандрита Ваграма или Ваграма Рабуна, секретаря царского двора – это исторический труд небольшого объема, изложенный в рифмованной форме и целиком посвященный истории Киликийского Армянского государства с момента его возникновения (1080 г.) до 80-ых годов XIII века. Он был создан как продолжение сочинения «Випасанутюн» Нерсеса Шнорали с учетом его структуры и рифмы.

Это историческое сочинение, созданное по заказу царя, часто приводилось в рукописях наряду с произведениями других авторов (Нерсеса Шнорали, Нерсеса Ламбронаци и др.). Печатные копии следовали тому же принципу. В XIX веке данное произведение издавалось несколько раз: начиная с 1804 г. (Мадрас) по 1869 г. (Париж). Все эти издания можно разбить на три группы: а) «Мадрас-1804», б) «Париж-1859» и в) «Мадрас-1810-Калькутта-1832-Париж-1869», которые основывались на отличающихся друг от друга рукописных копиях. Рукописи, послужившие основой для трех вышеупомянутых версий, либо не сохранились, либо их местонахождение неизвестно. И пока они не найдены, печатные экземпляры имеют значение оригинала и должны быть учтены при составлении критического текста. Сравнение этих изданий приводит к заключению, что версия «Мадрас-1810-Калькутта-1832-Париж-1869» является наиболее полной. Особенно это касается парижского издания Эдуарда Дюлорье 1869 г., которое имеет более выверенный и тщательно подготовленный текст (сопоставленный как минимум с 3–4 рукописями), а также научный аппарат и полный французский перевод.

Ключевые слова: *Архимандрит Ваграм (Ваграм Рабун (Рабуни)), «История Рубенидов», Карапет Шахназарянц, Эдуард Дюлорье, Мадрас, Калькутта, Париж.*

EDITIONS OF THE “HISTORY OF THE RUBENIDS” BY ARCHIMANDRITE VAHRAM (XIII c.)

VAHAN TER-GHEVONDIAN

Summary

The “History of the Rubenids” by Archimandrite Vahram, or Vahram Rabun, Secretary of the Royal Court, is a concise historical work, presented in a rhymed form and entirely dedicated to the history of the Cilician Armenian State from its origin (1080) to the 80s of the XIII century. It was created as a continuation of Nerses Shnorhali’s “Vipasanutyun”, as far as its structure and rhyme are concerned. This is a historical work, ordered by the king, which was often included in manuscripts along with texts by other authors (Nerses

Shnorhali, Nerses of Lambron and others). In the XIX century, this work was published several times: from 1804 (Madras) to 1869 (Paris). All these editions can be divided into three groups: a) “Madras-1804” b) “Paris-1859” and c) “Madras-1810-Calcutta-1832-Paris-1869”, which were certainly based on manuscript copies that differ from each other. The manuscripts that served as the basis for the three versions mentioned above have either not survived or their location is unknown. There is evidence that a large group of Armenian manuscripts in India have completely deteriorated (in the 1860s) due to being kept in very humid and unfit conditions. It is most likely that among them were also manuscripts based on which the Madras and Calcutta editions were made. The Paris edition of 1859 was made by Karapet Shahnazariants through a copy of a manuscript of the Saint Echmiadzin library. Therefore, until those manuscripts are found, printed copies have acquired the significance of the original and should be taken into account when composing a critical text. Comparison of these editions led us to the conclusion that the “Madras-1810-Calcutta-1832-Paris-1869” version is the most complete. This is especially true for the Paris edition of Édouard Dulaurier, which has a more verified and carefully prepared text (compared with at least 3-4 manuscripts) as well as a scientific apparatus and a complete French translation.

Keywords: *Archimandrite Vahram (Vahram Rabun (Rabuni)), «History of Rubenids», Karapet Shahnazariants, Édouard Dulaurier, Madras, Calcutta, Paris.*

АРМЕН МАРУКЯН*
Доктор исторических наук
Институт истории НАН РА,
mararmts@yahoo.com
0009-0007-4926-0654
DOI: 10.54503/1829-4073-2024.3.22-37

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРИЧИН И ПРЕДПОСЫЛОК ГЕНОЦИДА АРМЯН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И ГЕНОЦИДА ЕЗИДОВ В ПРОВИНЦИИ ИРАКА СИНДЖАР

Абстракт

В статье впервые проводятся параллели между Геноцидом армян, совершенным турецкими властями в Османской империи, и Геноцидом езидов, осуществленным террористической организацией «Исламское государство» в иракской провинции Синджар. В рамках данного исследования представляются как бесправное положение и религиозные преследования, так и проводимую на основе расистских идеологий дискриминационную демографическую политику турецких властей в отношении армян Османской империи и арабских властей в отношении езидов Ирака.

Помимо этого, в контексте состава преступления геноцида, зафиксированного в конвенции ООН «О предупреждении преступления геноцида и наказания за него», принятой 9 декабря 1948 года, отдельно рассматриваются подготовительные этапы Геноцида армян и Геноцида езидов. На основе сравнительного анализа в статье выявляются общности и особенности причин и предпосылок двух идентичных преступлений.

Ключевые слова: *Геноцид армян, Османская империя, пантюркизм, Геноцид езидов, провинция Ирака Синджар (Шингал), идеология арабизма, радикальный ислам.*

---

* *Статья была представлена 02.09.2024, рассмотрена 12.09.2024 и принята к публикации 15.12.2024.*

Вступление

В основе совершения такого тягчайшего преступления, каковым является геноцид, лежат определенные причины и предпосылки. Для проведения геноцидальной политики в отношении конкретных групп преступные режимы имеют свои мотивации и нарративы, и с учетом последних они осуществляют подготовительные работы, от которых зависит реализация данной преступной политики. В основе как Геноцида армян в Османской империи, так и Геноцида езидов в иракской провинции Синджар (Шингал) также лежат определенные причины и предпосылки, на базе которых преступный режим младотурок и руководство террористической организации «Исламское государство Ирака и Леванта» (далее – ИГИЛ) приняли решение по массовой ликвидации данных этнических групп.

Бесправное положение[*] и религиозные преследования армян в Османской империи и езидов в Ираке

На протяжении веков в Османской империи сложилась такая система правления, при которой христианское население было лишено равных с мусульманами прав. Если наказанием за убийство мусульманина мусульманином была смертная казнь, то убийство немусульманина мусульманином не влекло за собой какого-либо наказания. Показания немусульман в османском суде не имели такой же доказательной силы, как показания мусульман. Армяне, как и другие христиане империи, не служили в вооруженных силах, им вообще запрещалось иметь оружие.[1] В отличие от мусульман, христиане, в том числе армяне, жившие в Османской империи,

---

[*] Возникшая в 2004 году на базе некоторых структур международной террористической сети Аль-Каида суннитская террористическая группировка «Исламское государство» изначально финансировалась Катаром и Саудовской Аравией. Однако помимо этого ИГИЛ имел и другие источники финансирования, которые обеспечивались за счет продажи нефти, других природных ресурсов, предметов историко-культурного значения и военных трофеев, а также доходов, получаемых от выкупов за освобождение захваченных на подконтрольных территориях заложников. См.: Dispatch from the Field, Islamic State 2014 October, https://www.conflictarm.com/dispatches/islamic-state-ammunition-in-iraq-and-syria/ Ammunition.pdf (12.05.2024)

[1] См.: **Gunter** 2011, 2–3.

были обложены различными налогами. Помимо подушного и военного налогов армяне должны были предоставить курдам право зимовать в своих домах, а также три дня в году предоставлять бесплатное жилье турецким чиновникам.[2] Таким образом, в Османской империи сформировался бесправный статус армянского населения, которое фактически было поставлено вне закона.

Подобной дискриминации подвергалось также езидское население Ирака. Точной статистики о численности езидов в Ираке не было, по неофициальным данным их численность составляла около 550.000 – 600.000, согласно другим источникам, она достигала 800 тысяч.[3] Езиды в Ираке были второй по численности религиозной общиной после христиан.[4]

До массового истребления и изгнания из родных очагов большинство езидов проживало на северо-западе Ирака, в населенных пунктах Синджар, Башик, Телкеф, Шейхан и окрестных деревнях провинций Дохук и Мосул.[5] Один из отсталых районов Ирака – Синджар – был лишен государственных субсидий, имелись также серьезные проблемы в сфере предоставления населению каких-либо социальных услуг. В Синджаре действовала лишь одна больница на 15–20 коек, а для принятия родов беременным женщинам приходилось ездить в Дохук, находящийся в 167 км от Синджара. Подобное отношение властей к Синджару обусловливалось тем, что курдоязычных езидов идентифицировали с курдами. В Синджаре не было колледжей и высших учебных заведений, для получения среднего и высшего образования езидам приходилось ехать в Мосул, где они часто сталкивались с дискриминацией и насилием.

В период правления султана Абдул Гамида II, наряду с массовыми погромами армянского населения Западной Армении, имела место также насильственная исламизация армян. В октябре 1895 года, помимо физической ликвидации армянского населения, некоторая часть армян была

[2] См.: **Gunter** 2011, 33–34.
[3] **Кочои, Хасан** 2016, 98.
[4] **Salloum** 2013, 68.
[5] **Dinnayi** 2013, 5. https://www.kurdipedia.org/files/books/2013/87570.PDF (24.06.2024).

насильно обращена в ислам. Такой же участи удостоилось и армянское население Самсуна. В Эрзерумской долине были стерты с лица земли 40 армянских сел, население которых было уничтожено, выжили лишь жители трех насильственным образом исламизированых сел.[6]

По причине того, что езиды не исповедуют ислам, они подвергались дискриминации со стороны иракских властей. В отличие от христиан, езиды в Ираке не признавались религиозной группой, мусульмане их считали «поклонниками дьявола» и преследовали на основании законов шариата[7]. Подобно части христианского населения Османской империи, в том числе армянам, во избежание религиозных преследований, некоторые езиды также вынужденно принимали ислам и соблюдали исламские законы и обычаи.

Расистские идеологии и дискриминационная демографическая политика в отношении армян Османской империи и езидов Ирака

Помимо религиозных преследований преступные режимы на основе расистских идеологий проводили дискриминационную демографическую политику в отношении коренных народов.

Политика властей Османской империи в отношении нетурецких народов, и в первую очередь армян, проводилась на основе дискриминационной идеологии, которая прошла путь трансформации от «панисламизма»[8] к «паносманизму»[9] и «пантюркизму». Идеология пантюркизма предполагала отуречивание, а при невозможности, физическую ликвидацию нетурецких народов империи.[10] Наряду с реализацией идеологии пантюркизма другой важнейшей составляющей преступной политики Геноцида армян

[6] См.: Геноцид армян в Османской империи 1983, 83–84.

[7] **Кочои, Хасан** 2016, 98.

[8] Идеология «панисламизма» привела к исламизации некоторой части бесправных немусульманских народов империи, пытавшейся таким образом избежать жестоких притеснений и преследований. См.: **Гамелен, Брон** 1995, 30.

[9] Пришедшие к власти младотурки, изначально руководствуясь идеологией «паносманизма», пытались на основе языка, обычаев и традиций доминирующего турецкого народа, независимо от религиозной и этнической принадлежности, все население империи превратить в так называемых османов. См.: **Асланян** 2010, 82–83.

[10] **Худавердян, Саакян** 1995, 19.

являлось стремление турецких властей окончательно «присвоить» родину коренного армянского народа путем физической ликвидации последних в Западной Армении.[11]

Параллельно с массовым истреблением армян турецкие власти инициировали процесс тюркизации топонимов Западной Армении. Согласно 1-ой статье новой программы правительства от 5 января 1916 г., предполагалось все армянские, греческие и болгарские названия провинций, деревень, гор, рек и другие географические названия в империи сменить на турецкие.[12] Этим дополнительно подтверждалось, что для турецких властей одной из основных мотиваций осуществления Геноцида армян было окончательное присвоение родины армян – Западной Армении.

После прихода к власти партии «БААС» и установления режима С. Хусейна в Ираке господствовала идеология арабизма и радикального ислама, что представляло серьезную угрозу для всех неарабских этнорелигиозных общин. Естественно, политика арабизации Ирака не могла обойти курдоязычных езидов. Помимо религиозных преследований в период правления Хусейна против езидов стала проводиться политика ассимиляции, направленная на трансформацию их этнической идентичности в арабскую.

С середины 1870-ых годов турецкие власти приступили к более радикальным изменениям административных границ Западной Армении, что имело место до начала 1890-х годов. Османская империя стремилась создать такие административные единицы, в которых армяне и христиане в целом не составляли бы большинства.

В 1877 году отделившийся от Эрзерумской губернии Ванский уезд вместе с районом Хакиари превратился в отдельную провинцию, к которой позже присоединился Мушский уезд. Отделившийся от Диарбекирской губернии уезд Харберда также получил статус самостоятельной единицы, в состав которой в 1882–1883 годах из Диарбекирской губернии был переведен также уезд Малатьи. Из отделенных соседних уездов губерний Вана и Диарбекира в 1880 году образовалась новая провинция Битлиса.

[11] См.: **Марукян** 2010, 21–23.

[12] **Акчам** 2015, 68.

Входивший в состав Трапезундской губернии уезд Шапин-Карахисар в начале 1880-ых годов был включен в состав Себастийской губернии.

Таким образом, к концу XIX столетия административная система Западной Армении, представлявшая собой губернии Вана, Битлиса, Эрзерума, Диарбекира, Харберда и Себастии, до Первой мировой войны оставалась неизменной.[13]

Режим С. Хусейна также путем ассимиляции и насильственных переселений стремился изменить демографическую картину населенных езидами регионов. Иракские власти заставляли езидов из своих родных деревень переселяться в новобразованные «укрупненные поселения», тем самым нарушая их традиционный образ жизни.

В 1957 году в районе Синджара власти уничтожили около 60 езидских деревень, жители которых были выселены. Затем в 1960 г. власти конфисковали у езидов более 40.000 гектаров земли и передали их арабским фермерам. Переселение арабов в заселенный езидами район Синджара власти пытались оправдывать созданием зон безопасности в прилегающих к границе с Сирией районах, однако процесс переселения езидов осуществлялся также в расположенном в 30 км к северу от Мосула Шейхане и на других территориях страны. В 1975 году зарубежные правозащитные организации выражали озабоченность по поводу насильственной депортации около 25.000 езидов из Синджара[14].

Согласно указу от 16 марта 1978 года, все езидские земли и фермы в Шейхане передавались переселенным арабским племенам. За период 1969–1975 гг. власти уничтожили 232 езидские деревени, население которых было сконцентрировано в 12 «укрупненных поселениях». Во время массовых погромов курдов[*] в Ираке 6 сентября 1988 года были арестова-

---

[13] История Армении 2010, 448–450.

[14] **Кочои, Хасан** 2016, 53.

[*] В 1987–1989 гг. более 182.000 человек погибли вследствие политики иракских властей по массовому истреблению курдов, более известной как операция «Анфаль». После свержения режима С. Хусейна новые власти Ирака организовали суд над подозреваемыми в этих преступлениях бывшими военными и политическими лидерами, часть которых была приговорена к смертной казни, часть же – на тот или иной срок тюремного заключения. См.: **Кочои, Хасан** 2016, 52–95.

ны также члены 36 семей езидов, которые позже были заживо захоронены.[15]

Аналогично с дискриминационной политикой, проводимой турецкими властями в отношении армянского населения Османской империи, преследования езидов в Ираке не ограничивались физическим насилием, конфискацией сельскохозяйственных земель, скота и домашней утвари, включая и похищение езидских девушек и женщин.[16]

Подготовительный этап Геноцида армян в Османской империи и езидов в Ираке

